## Արձանագրություն N 3
## ՔՀ-ՊԸԱԾՁԲ-16/1 ծածկագրով պարզեցված ընթացակարգի հանձնաժողովի նիստի

գ.Քանաքեռավան

12 մայիսի 2016թ.
ժամը՝ 11:00

Հանձնաժողովի նախագահ՝ Ա.Ղարիբյան
Հանձնաժողովի անդամներ՝ Թ.Ղևոնդյան
Լ.Գևորգյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Է.Գրիգորյան

### 1. Ընթացակարգի հայտեր պարունակող ծրարների բացման մասին
(*Ա.Ղարիբյան*)

Մասնակիցների կողմից ներկայացված ծրարները կազմված և ներկայացված են հրավերով սահմանված կարգով: Մասնակիցների կողմից ներկայացված ծրարներում հրավերով սահմանված փաստաթղթերը առկա են և կազմված են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, բացառությամբ՝ <<Ծինալյուս>> ՍՊԸ-ի, որի կողմից ներկայացված վճարման պահանջագիրը չի համապատասխանում հրավերով սահմանված վճարման պահանջագրի վավերապայմաններին, և <<ԷԴ Ծին>> ՍՊԸ-ի, որի կողմից ներկայացված հայտում բացակայում է հրավերով պահանջված լիցենզիայի պատճենները:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին 45-րդ կետի համաձայն վերը նշված անհամապատասխանությունների մասին ծանուցել <<ԷԴ Ծին>> ՍՊԸ-ին, որը պետք է ներկայացնեն իր կողմից կատարված շտկումները մինչև 13.05.2016թ. ժամը՝ 14:00, ՀՀ Կոտայքի մարզ, Քանաքեռավան համայնք փ.13, 4-րդ նրբանցք, շենք 2 հասցեով:

**Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:**

### 2.Մերժված հայտերի մասին
(*Ա.Ղարիբյան*)

Համաձայն ՀՀ Կառավարության 168-Ն որոշման կարգի 44-րդ կետի 4-րդ ենթակետի մերժել՝ <<Ծինալյուս>> ՍՊԸ-ի հայտը:

**Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:**

### 3.Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին
(*Ա.Ղարիբյան*)

ՔՀ-ՊԸԱԾՁԲ-16/1 ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ս.թ. մայիսի 13-ին ժամը 14:00, ՀՀ Կոտայքի մարզ, Քանաքեռավան համայնք փ.13, 4-րդ նրբանցք, շենք 2 հասցեով:

***Ընդունվել է որոշում կողմ-3, դեմ – 0:***

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա.Ղարիբյան
Հանձնաժողովի անդամներ՝ Թ.Ղևոնդյան
Լ.Գևորգյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Է.Գրիգորյան